նախագիծ 18

արձանագրային

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի մասին

Հավանություն տալ Հավանություն տալ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթին և դրանք սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Ազգային ժողով:

Ա. Գրիգորյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-66-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի «30000 դրամ» բառերը փոխարինել «32500 դրամ» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 2-րդ հոդվածի

1. 2-րդ պարբերության «179 դրամ» բառերը փոխարինել «196 դրամ» բառերով.
2. 3-րդ պարբերության «199 դրամ» բառերը փոխարինել «218 դրամ» բառերով.
3. 4-րդ պարբերության «298 դրամ» բառերը փոխարինել «326 դրամ» բառերով:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 հոդվածով.

«ՀՈԴՎԱԾ 2.1. Առողջապահության, հոգաբարձության (խնամակալության), մանկական-դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների նվազագույն ժամային տարիֆային դրույքը որոշվում է սույն օրենքի առաջին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը բաժանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այդ աշխատողների ամսվա համար սահմանված աշխատաժամանակի նորմալ տևողությանը:»:

ՀՈԴՎԱԾ 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-183 օրենքի 14-րդ հոդվածի «30000 դրամ» բառերը փոխարինել «32500 դրամ» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Տեղեկանք-հիմնավորում

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման

1. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության 2009-2011 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 859-Ն որոշման, ըստ որի, 2011 թվականին նախատեսված է նվազագույն ամսական աշխատավարձի չափը սահմանել 32500 դրամ:

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափ սահմանված է աշխատաժամանակի նորմալ տևողությամբ՝ շաբաթական 40 ժամ, աշխատաժամանակի կրճատ տևողությամբ՝ շաբաթական 36 ժամ կամ 24 ժամ աշխատողների համար: ՀՀ Կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N201-Ն որոշմամբ սահմանված է առողջապահական, հոգաբարձության, խնամակալության, մանկական-դաստիարակչական, էներգամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի ռեժիմը, որով հիշյալ բնագավառի աշխատողների համար աշխատաժամանակի նորմալ տևողություն է սահմանված 39, 33, 30 և 22 ժամերը: Վերոնշյալ կատեգորիայի աշխատողների համար նվազագույն ժամային տարիֆային դրույք ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, սակայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է ոչ աշխատողի մեղքով պարապուրդի վճարումը կարգավորող դրույթներ, որում պարապուրդի վճարման նվազագույն չափ է նախատեսված օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամային դրույքաչափը: Վերը նշվածով պայմանավորված՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում առաջարկվում է սահմանել նվազագույն ժամային տարիֆային դրույքի հաշվարկման մեխանիզմը՝ առողջապահական, հոգաբարձության, խնամակալության, մանկական-դաստիարակչական, էներգամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների համար:

2. Նվազագույն աշխատավարձի օրենքով ամրագրված չափը աշխատողի համար հանդիսանում է պետության կողմից սահմանված երաշխիք: Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված ԱՄԿ 1970 թվականի հունիսի 3-ի N131 կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հետևյալը՝ «Նվազագույն աշխատավարձն ունի օրենքի ուժ և նվազեցման ենթակա չէ. այս դրույթի չկիրառումը պատասխանատու անձի կամ անձանց նկատմամբ առաջացնում է քրեական կամ այլ պատասխանատվություն»:

Հիշյալ դրույթը իրացնելու՝ նվազագույն ամսական աշխատավարձի օրենքով սահմանված չափը ապահովելու նպատակով անհրաժեշտ է փոփոխություն կատարել նաև «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, որի դեպքում «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված համախառն եկամտից անձնական նվազեցման չափը կհավասարվի նվազագույն ամսական աշխատավարձի՝ օրենքով սահմանված չափին: